

մերձաւորաց եւ հեռաւորաց. այն զի 'ի հռչակել խնդրոյ իւրոյ եւ խոստման կայսերն Հռովմայ՝ արդէն իրաւամբք եւ բարոյապէս թագաւորեալ էր. չեն ինչ ապա զարմանք՝ Լամբրունեցոյն անդստին յամի 1194 թագաւոր կոչել զնա եւ ճանաչել:– Այլ զի արեւմտեայք զբաղեալ էին 'ի գործս իւրեանց՝ նաեւ յետ պայմանաց հաշտութեան Հռիկկարդի ընդ Սալահէտտինի, եւ յետ մահուան սորա եւս, հարկ լինէր Լեւոնի թղթով եւ դեսպանօք, եւ անձամբ իսկ տեսութեամբ մերձ հանդիպելոց աւագ իշխանաց, յիշեցուցանել զխոստումն մեծն կայսերն, եւ զիւր՝ ոչ եւս խնդիր այլ զիրաւունս: Մարթ էր եւ յայլմէ իսկ թագաւորէ ընդունել զթագն, խոստանալով նմա զաւատականն վարկաբարձի մեծաբանս, այլ նորա իղձ էր հօգօս եւ մեծամեծս ոմանս ունել իւր թիկունս՝ օգնականութեամբ եւ պաշտպանութեամբ երկրին եւ պատուոյն. եւ յերկոսին գերածայրեալ գագաթունս՝ կառուցեալ էր զակնն, 'ի նոցանէ ընդունել մեծաւ հռչակաւ՝ եւ ոչ յայլմէ ումեքէ, այսինքն 'ի հռովմէականն կայսերէ եւ 'ի հռովմէական Քահանայապետէ:

Ի գալն 'ի Սիսուան Հէնրեայ դքսի Շամբանեայ՝ ընծայելոյ 'ի թագաւորութիւն Երուսաղեմի, որ 'ի ժամուն գուգավիճակ իմն էր Լեւոնի, եւ 'ի յաջողել միջնորդութեան սորա ընդ Լեւոն եւ ընդ Բրինձն Անտիոքայ, ըստ որում պատմեցաք, հաւանութեան է թէ յանձն արար նմա Լեւոն՝ իբրեւ մտերմի եւ երախտառուի, ազդ առնել որոց արժանն է՝ զիւր խնդիր. հարկաւորապէս եւ սա խոստացաւ՝ որչափ ինչ բաւէրն առնել եւ փութացուցանել. այլ ոչ եթէ, (որպէս գրէ հին պատմիչ ոմն արեւմտեայց)⁵³. սա ինքն ըստ խնդրոյ Լեւոնի թագ կապեաց նմա, իբրու զի տէր էր ընդարձակ երկրի, եւ զԲրինձն Անտիոքայ ընդ ձեռամբ կամ շքադիր իւր ունէր: Գուցէ շփոթէ պատմիչդ գղութս Հէնրի՝ ընդ համանուն կայսերն՝ որդւոյ մեծին Փրետրիկի, յորմէ արդարեւ յետ սակաւուց 'ի ձեռն հրեշտակաց իւրոց եւ թղթոց՝ խնդրեաց Լեւոն կատարել զխոստումն հայրենի. նոյնպէս 'ի ձեռն դեսպանաց աղերսեալ նախ եւ առ Քահանայապետն Հռովմայ (Կելեստին Գ, զորմէ յետոյ լիցին բանք): Պատգամաւորութիւն դեսպանացս՝ հաւանօրէն կատարեցաւ յամի 1196, 'ի Մեդիոլան⁵⁴, ուր գտանէր կայսրն,

⁵³ Շաբայար. Գուլ. Տիւրացոյ. Dist li Sires d'Ermenie au conte Henri: Sire, j'ai assez terre, cités et chastiaus et granz rentes, por estre roi; si est le prince d'Antioche mes hons. Je vos pris que vous me corones. Le Cuens le corona volontiers. Ainsy ot roi en Ermenie.

⁵⁴ Ի Միլան էր կայսրն եւ յ'12 օգոստ. զի գտանի յայնմ աւուր հրովարտակ մի նորա անդ տուեալ:– Muratori, Annali 1196:– Ռոհստ (Rohde) ըստ Մարբակեան